



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76

2

L-85

my. 26

2010

ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ

Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԳԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ



ԻԹԷՆԻՍԻԱ

Իսպարսկի Խաչիպեան Ուսուցնարանի Հայոց

—
1861.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ ՈՒ Ն Զ Ս ՈՒ Ր Բ Գ Ր Ո Ց

Գ Ա Ս Հ Ի Ն Գ Ե Բ Ր Ա Ր Գ Ի



ողովմ եւ Գ ոմոր քաղաքներուն կործանմանէն մէկ տա-
 րի վերջը Աբրահամ որդի մը ունեցաւ Սառայէն, եւ
 անունը դրաւ Ի ս ա հ ակ, որ ծիծաղ ըսել է, մօրը ծի-
 ծաղածին յիշատակ: Աբրահամ Աստուծոյ հրամանովը Թլիատեց
 զԻսահակ, եւ տղուն կամէ կտրուած օրը մեծ ուրախութիւն ըրաւ:
 Երբոր Իսահակ քիչ մը մեծցաւ, Սառան տեսաւ որ Իսմայելը
 անոր նեղութիւն կուտայ, ստիպեց Աբրահամն որ Ագարն ալ
 տղան ալ հանէ արձրկէ քովէն:

Սառային այս խորհուրդը ծանր երեւցաւ Աբրահամու, եւ
 բնական գուժն ու որդեսիրութիւնը չէր Թողուր որ մտիկ ընէր
 անոր: Երբոր այս բանիս վրայ տագնապելով հոգ ու մտտուք
 կընէր, Աստուած ըսաւ իրեն որ Սառային խօսքը ընէ. «Եւ Թէ-
 պէտ, ըսաւ, Իսահակը պիտի լինի քու բուն ժառանգը, Բայց
 Իսմայելն ալ մէկ մեծ ազգի մը գլուխ պիտի ընեմ: քու սիրոյդ
 համար:»

Երկրորդ առաւօտը ելաւ Աբրահամ, հաց ու ջուր եւ բաւա-
 կան ապրուստ տուաւ Ագարու, տղան ալ ուսը դրաւ ու ճամ-
 բեց: Խեղճ Ագարը սրտին ցաւէն շուարած՝ ո՛ւր երթալիքը չէր
 գիտեր. հետը առած ջուրն ալ ինքն ու տղան խմեցին լմրնցաւ,
 յուսահատութիւնը կոխեց վրան. ծառի մը տակ ձգեց զաւակն
 ու գնաց քիչ մը հեռուն նստաւ, տղան կուլար, մօրը սիրտը կը-
 կտրտէր: Բայց Ագարը ինքն էր իրեն ու իւր զաւկին խեղճու-
 Թեանը պատճառ, եւ զգուշալի օրինակ այն մարդկանց որ մե-

ծուծեան մը հասածներուն պէս՝ իրենց չափը կմոռնան, քեր-
նին կբարձրացընեն, ու որոցմէ որ աղէկուծիւն՝ երախտիք
տեսեր են՝ կսկսին անոնց հետ ալ արհամարհուծեամբ վարուիլ,
եւ ձեռքերէն գայ նէ՝ անոնց ոտքն ալ սրկըեցընելու կաշխա-
տին որ իրենք միայն գլխաւոր տանտիրոջը աչքը մտնեն :

Այս ճշմարտութիւնը նայեցէք ի՛նչ գեղեցիկ կերեւնայ այս
պատմութեան մէջ ալ: Զը՛սեր Աստուածաշունչը թէ Աստուած
Ագարին խեղճութեանը վրայ խղճաց գեթացաւ. ոչ. հապա ի՛նչ. «եւ
լուաւ Աստուած ձայնի մանկանն. » տղուն ձայնը լսեց Աստուած,
տղո՛ւն վրայ խղճաց Աստուած ու ըսաւ Ագարայ. «Մի՛ վախնար,
մի՛ յուսահատիր. ել գնա, առ տղադ, արտսունքները սրբէ, վասն
զի՛ ես մեծ ազգի մը գլուխ պիտի ընեմ՝ զի՛նքը: » Յետոյ Ագարայ
աչքը քացաւ Աստուած. նայեցաւ մէկդի, տեսաւ որ գեղեցիկ
աղբիւր մը կայ յստակ ու կենդանարար ջրոյ: զնաց խմցուց
տղուն, նա ալ դադրեցաւ լալէն: — Երանի՛ այն մայրերուն որոց
որ աչքը կբանայ Աստուած ու կտեսնեն կճանչնան այն գիտու-
թեանց եւ բարի կրթութեան աղբիւրները որ գուցէ իրենց մօ-
տիկ ալ են, ու անոնց ջրովը իրենց զաւակներուն ծաւալը
կանցընեն:

Իսմայէլ անպատիւն մէջ մեծցաւ, եւ քաջ աղեղնաւոր՝ նետ
նետող եղաւ: Անոր ցեղէն եղան յետոյ Իսմայէլացիք, որ հիմա
Արաբ կամ Արաբացիք եւ Տասիկք ալ կըսուին, որ վազուկ
ըսել է, եւ ինչպէս որ գիտէք՝ հին ատենէն իվեր արեւելք հզօր
բազմաթիւ, սրամիտ ու ճարտար ազգերէն մէկն եղած է: Այս
երբոր Իսահակ քսան կամ քսանրհինգ տարեկան եղաւ, Աս-
տուած Աբրահամ նահապետին հաւատքը փորձելու համար ըսած
անոր թէ «Այդ քու սիրելի որդիդ Իսահակը՝ առ, ու որ լինն
որ ցուցընեմ քեզի՛ հոն տար, մորեք, ինծի զոհ ըրէ: » Կրնամք
մտածել թէ այս հրամանը ի՛նչ մեծ ցաւ տուած պիտի լինի
ընական կերպով Աբրահամու սրտին իսկ տղուն մօրը, այսին-
քըն Սարային գուցէ Աբրահամ չիմացուց ալ: Քայց, ինչպէս որ
Պօղոս առաքեալն ալ կըսէ, Աբրահամու հաւատքը, եւ Աստու-
ծոյ կամացը հետ համակերպութիւնը այնչափ մեծ էր որ հայ-
բական սէրն ու որդեսիրական գուծը յաղթուեցաւ անոնցմէ:

անշուշտ միտքը դրաւ թէ ինչպէս որ այն սիրելի զաւակը իրեն պարգեւողը Աստուած է, առնել ուզողն ալ Աստուած լինելով, ինքը իրաւունք չունի գանգատելու կամ դէմ կենալու: Կրնար տարակուսիլ թէ հապա ի՞նչ կերպով պիտի կատարուի Աստուծոյ իրեն ըրած այն խոստմունքը որ Իսահակայ զաւակներէն պիտի ծնանի մարդկային ազգիս փրկիչը, եւ անկէց պիտի բազմանան Աբրահամու սերունդները: Բայց մտածեց որ Աստուած կարող է նաեւ մեռածին յարուածիւն տալ, եւ թէ ինքը մեզմէ լաւ գիտէ թէ ի՞նչ կերպով եւ ի՞նչ անհասանելի Յամբաներով իրեն խորհուրդը կկատարէ:

Ելաւ առաւօտը կանուխ, էջը պատրաստեց, ողջակեզին համար փայտ կոտրեց, կապեց, առաւ հետը երկու ծառայ եւ Կիրելի որդին Իսահակը, ելաւ գնաց Աստուծոյ ցուցուցած տեղը, որոյ համար կըսեն ոմանք թէ՝ Երուսաղեմի քովերն էր: Երկու օր Յամբայ ընելէն ետեւ տեսաւ հեռուէն լեռը, որ գուցէ Գողգոթան էր. ըսաւ ծառաներուն թէ «Դուք այդ տեղը նստէք, մեզի սպասեցէք. ես ու որդիս մինչեւ դիմացի լեռը կերթամք, աղօթք կընեմք ու կդառնամք:»

Յետոյ պոչաւ հետերնին բերած փայտը, եւ Իսահակայ շալակը տրուաւ ինքն ալ թուրն ու կըրակը առաւ, ելան գնացին երկուքը մէկտեղ: Ճամբան հարցուց Իսահակ հօրը թէ «Շայր, կրակ ու փայտ ունի՞մք, բայց ողջակեզին ոչխարը ո՞ւր է:» Պատասխան տուաւ Աբրահամ՝ սիրտը կտրտելով թէ «Աստուած իրեն համար ողջակեզի ոչխարը կպատրաստէ, որդեակ:»

Երբոր հասաւ լեռանը վրայ, Աբրահամ սեղան մը շինեց, վրան փայտերը շարեց, կապեց Իսահակը — որուն անշուշտ հասկըցուց առաջ Աստուծոյ կամքն ու հրամանը, — եւ հանեց դրաւ վեղանին փայտերուն վրայ: Ձեռքն որ երկընցուց թուրը՝ առնելու որ մորթէ իւր զաւակը, «Աբրահամ Աբրահամ, կանչեց իրեն հրեշտակը, մի՛ դաչիր տղուդ. հիմա հասկըցայ որ իրաւցընէ պատուածավախ մարդ ես, եւ իմ սիրոյս համար քու սիրելի որդւոյդ չխնայեցիր:» Աբրահամ աչքը մէկդի դարձուց, Կեսաւ որ Սաբեկայ ծառ ըսուած մորենիներուն մէջ խոյ մը՝ ոչխար մը՝ եղջիւրներէն բռնուած ու կախուած կեցեր է: Գնաց

առաւ այն ոչխարը, բերաւ Իսահակայ տեղը մորթեց, զոյ ըրաւ Աստուծոյ: Անոր վրայ Աստուած նորէն օրհնենքներ տուաւ Աբրահամու, եւ Աբրահամ ու Իսահակ դարձան ուրախութեամբ ծառաներուն քով, անկէց ալ իրենց տունը:

Աբրահամու մեծահաւատութիւնը խիստ շատ բարեպաշտ անձանց բարի օրինակ եղած է՝ հին եւ նոր ժամանակը՝ համակամութիւն ունենալու Աստուծոյ ամենասուրբ կամացը հետ, եւ իրենց սիրելի զաւակներէն սիրով զրկուելու՝ թէ՛ մահուամբ, թէ՛ կրօնաւորական կենաց նուիրելով, եւ թէ ուրիշ ո՛ր եւ իցէ կերպով: Բայց եղած են ոմանք, թերեւս հիմա ալ կզտնուին, որ Աստուծոյ հրամանին ու Աբրահամու այն հրամանը անտըրտունջ կատարել ուզածին վրայ կգայթակղին, ու կըսեն թէ «Աստուած պէ՞տք էր որ այնպիսի անգուժ հրաման մը ընէր Աբրահամու:» Սորա կերելի թէ կմոռնան որ Աստուած ի՞նքն է տէր կենաց եւ մահու, եւ ո՛րչափ որ կուզէ կարող է երկընցնել կամ կարճեցընել մեր կեանքը: Թէ որ մէկ փորձանքով կամ հիւլանդութեամբ մը առնէր Աստուած Իսահակը Աբրահամու ձեռքէն, մի՞թէ Աբրահամ իրաւունք կունենա՞ր գանգատ ընելու՝ տրտնջելու Աստուծոյ դէմ.— ոչ երբէք. ուրեմն այս կերպով ալ իրեն որդին թէ որ Աստուծոյ նուիրէր, իհարկէ պէտք չէր որ տրտնջար: Թէ որ մէկն ըսէ թէ գէշ բան ու չար օինակ է մարդագոհը, այսինքն մարդ զոհելը Աստուծոյ, — ինչպէս որ վայրենի մարդիկ մինչեւ հիմա կընեն, եւ ինչպէս որ այս Խրիմու հին ատենի բնակիչներէն ալ կընէին, ու դըսէն եկած՝ կամ ալեկոծութեամբ Խրիմու ծովեզերքը ընկած մարդիկը կառնուին՝ իրենց կուռքերուն զոյ կընէին,— իրաւունք ունի. եւ ահա անոր համար ալ չթողուց Աստուած որ Աբրահամ կատարէ իւր հրամանը. այլ միայն տեսնելով որ պատրաստ է նա իրեն հնազանդելու՝ զոյ եղաւ, եւ իւր օրհնութիւններովը ցուց զնահապետը:

Բայց Աստուած մարդուս սիրտը՝ միտքը գիտէ, եւ օրերով տարիներով առաջ կիմանայ մարդուս ընելիքը, մտածելիքը. ուրեմն ի՞նչ կարօտ էր կըսեն, զԱբրահամ փորձելու: — ձգմարիտ է որ Աստուած փորձի կարօտ չէր, բայց Աբրահամ կարօտ էր այն փորձութիւնը քաշելու որ հաւատքը հաստատուի. եւ մարդ-

կային ազգը կարօտ էր այսպիսի օրինակ մը ունենալու աչքին առջեւն որ հասկընայ թէ Աստուած իրաւունք ունի՝ թէ որ կամենայ մեզմէ ասոր նման զոհեր պահանջել. վասն զի կարող է անոնց տեղն ալ մեր վարձքը հարիւրապատիկ հատուցանել: Եւ ահա այսպիսի օրինակէ սիրտ առած՝ խիստ շատ մարտիրոսներ՝ իրենց սուրբ հաւատքէն ետ չկենալու համար՝ կեանքերնին դրին, ոմանք ալ իրենց սիրելի զաւակներուն նահատակութեանը յորդորող ու խրատ տուող եղան, ինչպէս Մակաբայեցւոց ժամանակը երանելին Նամունէ, որ իրեն եօթը հատ կտրիճ տղոցը նահատակութիւնը աչքովը տեսաւ, ու անդադար յորդորանք կուտար ամէն մէկուն որ ամուր կենան իրենց հաւատքին վրայ. նմանապէս երանելին Յուզիտա, որ իրեն ծաղկահասակ զաւակին նահատակուիլը աչքին առջեւը տեսաւ ու փառք տուաւ Աստուծոյ. եւ ուրիշ շատ նահատակք քրիստոնէական սուրբ հաւատոյ, որոց ամենուն հայր եւ օրինակ կը համարուի մեծահաւատն Աբրահամ:

Հրեայք մտքերնին դրած են թէ Աբրահամու տրուած օրհնութիւնները միայն իրենց համար են, որովհետեւ իրենք միայն են սերունդք եւ զաւակք Աբրահամու ըստ մարմնոյ. բայց կը սխալին: Վասն զի Աստուած ըսաւ Աբրահամու թէ «Իզաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի. — քու զաւակովդ աշխարհիս ամէն ազգերն ալ օրհնուին:» Յայտնի բան է որ զաւակ բռնով այս տեղը Հրէից ազգը չհասկըցուի, հապա անկէց ծնանելու Մեսիան, որ ոչ միայն Հրէից փրկիչ պիտի լինէր, այլ եւ ամենայն ազգաց եւ ժողովրդոց, որ անով Աբրահամու որդիքը պիտի համարուէին, եւ անոր տրուած հոգեւոր օրհնութիւնները պիտի ժառանգէին: Ապա թէ ոչ, այսինքն թէ որ Աբրահամու զաւակ ըսելով՝ Հրէից ազգը հասկընամք եւ ոչ թէ Մեսիան, եւ Աբրահամու տրուած օրհնենքները մարմնաւոր յաջողութեանց մտքով առնուամք՝ եւ ոչ թէ հոգեւոր, ի՞նչ օգուտ այն օրհնենքներէն ուրիշ ազգաց, մինչդեռ յայտնապէս կըսէ Աստուած թէ «Քո՛ւ զաւակովդ աշխարհիս ամէն ազգերն ալ օրհնուին:»

Սառա հարիւր քսանըեօթը տարի ապրելէն ետքը վախճանեցաւ: Տրտմեցաւ ու լացաւ Աբրահամ իւր արժանաւոր ամուս-

նոյն մահուանը վրայ, ոչ թէ յուսահատաբար, եւ ոչ այնպէս ճեճկուելով՝ ինչպէս որ յարուժեան մեռելոց յոյս չունեցողները կրնեն. այլ այն կերպով՝ ինչպէս որ սիրելի ճնողք եւ ազգականք կամ բարեկամք կտրամին իրենցմէ մէկուն՝ երկար ճամբորդութեամբ տեղ մը գնացած ժամանակը. բայց հաստատուն է իրենց յոյսն որ նորէն հետը պիտի տեսնուին՝ իրե՛նք երթալով ետեւէն, եւ ոչ թէ նորա գալուն սպասելով:

Աբրահամ մինչեւ այն ժամանակը վրանաբնակ (կէօշէր էվի) ու պանդուխտ (խարիպ) էր քանանացոց երկրին մէջ, իրեն սեպհական տեղ մը՝ գետին մը չունէր: Սառային համար պատուաւոր ու հանգիստ գելեգման մը պատրաստելու մտքով՝ Քեբրոն ըսուած տեղը ազարակ մը գնեց, ու հոն այրի (մաղարայի) մը մէջ թաղեց պատուով իւր ամուսինը. ասով ալ օրինակ եղաւ այն ամենայն բարեսիրտ ու արդար մարդկանց որ գիտնալով թէ Աստուծոյ առջեւը ննջեցեալներն ալ կենդանի են՝ նոցա մարմնոյն թաղումը պատուով ու զգուշութեամբ կրնեն, եւ ոչ անգուժարհամարհանօք եւ հեծանոսական յուսահատութեամբ:

Այնուհետեւ ինքն ալ տեսնելով իւր ճերանալը, մտածեց որ քանի որ որջ է՝ Իսահակայ վիճակը կարգի դնէ, ու իրեն Աստուծմէ բնդունած հոգեւոր ու մարմնաւոր բարիքներուն արժանաւոր ժառանգ ու յաջորդ թողու իւր սիրելի որդին: Չմտածեց այն ճնողաց պէս որ իրենց բոլոր կենացը մէջ կաշխատին կչարջարուին իրենց որդոցը համար միայն կորստական հարստութիւն՝ միայն ստակ ժողովելու, եւ ամենեւին հոգ չեն ըներ որ նոցա ճշմարիտ ընտանեկան երջանկութիւն պատրաստեն, որ առանց անոր նիւթական հարստութիւնը ոչինչ է, եւ աղքատութենէն ալ աւելի վնասակար:

Կանչեց իրեն մէկ հատիկ հաւատարիմ ծառան, եղիագար անունով, ու ապսպրեց անոր որ ելլէ երթայ Միջագետք՝ իրեն եղբորն ու ազգականներուն ասունը, անոնցմէ հարս մը անուր բերէ իրեն Իսահակ որդւոյն: Հարցուց ծառան որ «եթէ հարսը չուզէ այս կողմերը գալ, որդիդ հոն տանի՞մ: — Ոչ, ըսաւ Աբրահամ, որդիս այս երկիրս պէտք է մնայ, թէպէտ եւ քանանացոց հետ խնամութիւն պիտի չընէ ամենեւին:» Երգում առաւ

ծառայէն որ իրեն խօսքէն դուրս չելլէ, ու ճամբեց Միջագետաց Խառան քաղաքը՝ իւր եղբօրը Նաքովրայ տունը:

Աղէկ կրտսն թէ «Ծառան ծառայ ընողը տէրն է, ծառան մարդ ալ ընողը տէրն է:» Աբրահամու պէս մեծահաւատ տէրը պէ՛տք էր որ իրեն պէս ալ հաւատարիմ ծառայ ունենար: Եկաւ գնաց մարդը ուղտերով ու ընծաներով. քաղաքէն դուրս ջրհոր մը կար, անոր քովը իջաւ, ու Աստուծոյ խնդրեց որ իւր Աբրահամ տիրոջը ոգորմելով՝ յաջողութիւն տայ գործին: «Ահա ես հոս կ'նստիմ, ըսաւ մտքէն աղօթական ձեւով. իրիկուան դէմ եղածէն՝ քաղաքէն բազմութեամբ աղջիկներ կուգան ջուր առնելու. ո՛ր աղջկանն որ ես ըսեմ թէ սափարդ վար առ որ ջուր խմեմ, ու նա սիրով պատասխան տայ ինծի թէ խմէ, ուղտերուս ալ յօժարի ջուր խմցնելու՝ մինչեւ որ կշտանան, հասկընամ որ այն կոյսը պատրաստեր ես, Տէր, իմ Իսահակ տիրոջս արժանի կենակից, բարեսէր, մարդասէր, պշտատասէր ու խելացի:»

Այս խօսքը դեռ բերանն էր, եկաւ անդիէն Նաքովրայ Բաթուէլ որդւոյն Ռեբեկա աղջիկը՝ հոգւով եւ մարմնով գեղեցիկ, ու ծառային կարծածէն աւելի յօժարափոյթ սիրով ջուր խմացուց անոր եւ ուղտերուն: Բոլոր այն ժամանակը ծառան զարմացած կնայէր Ռեբեկայի տեսքին ու մարդասէր գործունէութեանը վրայ. հասկըցաւ որ Աստուծոյ իրեն Իսահակ տիրոջը համար պատրաստած հարսը նա է. հանեց զոյգ մը օղ ու ավարանջաններ տուաւ անոր ու համարձակ հարցուց իմացաւ ո՛վ եղածը, երեսի վրայ ընկաւ՝ փառք տուաւ Աստուծոյ որ այս կերպով յաջողեց իրեն գործը:

Ռեբեկան վազեց իմաց տուաւ հօրն ու մօրը. եւ եղբայրը Լաբան շուտ մը գնաց, տուն հրամցուց այն մարդն ու պատիւ՝ հարկինք ըրաւ: Կերակրէն առաջ դարձաւ ըսաւ մարդը թէ բերանս հաց չեմ ո՛նէր՝ մինչեւ որ ձեզի ունեցած խօսքս ըսեմ: «Ես Աբրահամու ծառան եմ ըսաւ՝ իրաւացի պարծանքով. — վասն զի աւելի մեծ պատիւ է պատուաւոր մարդու հաւատարիմ ծառայ լինել՝ քան թէ շատ ծառաներու անզգամ տէր գտնուիլ. — «Ես Աբրահամու ծառան եմ, ու այսպէս այսպէս

այս բանիս համար եկած եմ. կխնդրեմ որ պատասխան մը տաք որ գիտնամ ընելիքս:» Ռեբեկայի հայրն ու եղբայրը պատասխան տուին թէ «Հոս Աստուծոյ ձեռքը կայ. քու ըսածդ բարի բան է, բարւոյն հակառակ կենալ մեր բանը չէ. մեր կողմանէ ղժուարութիւն չունիմք, կուտամք Ռեբեկան, կառնուս կերթաս տիրոջը»: Մառան այս որ լսեց, երկրպագութիւն ընելով փառք տուաւ Աստուծոյ. հանեց հետը բերած ոսկեղէնները, արծրեղէնները եւ հագուստները տուաւ Ռեբեկայի, անոր եղբարցն ու մօրն ալ ընծաներ: Կերան խմեցին, այն գիշերը հոն անցուցին, եւ երկրորդ օրը հրաման ուզեց որ առնու Ռեբեկան ու Ձամբայ ելլէ: Մտողքը կուգէին որ տասը օր մը տունը կենայ աղջիկն ու հարսանիք ընեն, ինչպէս որ սովորութիւն էր. բայց Ռեբեկան կանչեմք ու իրեն հարցընեմք, ըսին: Տեսէք որ տգէտ կամ անգութ ծնողաց պէս չեն ըսեր եղեր այն ատենները թէ «աղջկան ուզելուն չուզելուն խօսքը մի կլինի. կուտաս կերթայ:» Կանչեցին հարցուցին թէ կերթա՞ս այս մարդուն հետ: — Կերթամ, ըսաւ Ռեբեկան. նոքա ալ օրհնեցին զինքը, եւ ի՛նչ որ տալու էին հետը օժիտ ու աղախիւններ՝ տուին ու Ձամբայ դրին ծառային հետ:

Իսահակ իրիկուան դէմ դաշտին մէջ քալելու ելեր էր. հեռուէն տեսաւ որ տասը ուղտ կուգայ, սկսաւ դէպի այն կողմը երթալ: Ռեբեկան ալ իսահակը տեսածին պէս՝ ուղտէն վար իջաւ. հարցուց ծառային թէ այն մարդը ո՞վ է. ու երբոր իմացաւ թէ իսահակն է՝ գլուխն ու երեսը ծածկեց համեստութեամբ: Մառան պատմեց Աբրահամու եւ իսահակայ տեղնիտեղը ամէն բան, եւ իսահակ այն ատենը մխիթարուեցաւ՝ կրսէ սուրբ գիրքը՝ իրեն մօրը Սառային մահուանը վրայ. վասն զի յիրաւի բարի ամուսինը մայր, քոյր, բարեկամ ու խորհրդական է բարի մարդուն բոլոր կենացը մէջ:

Աբրահամ բոլոր իւր հարստութիւնը իսահակայ թողուց. իսկ միւս որդւոցը որ ունեցած էր Քետուրա անունով կնոջմէն՝ պարգեւներ տուաւ ու հեռացուց իսահակայ քովէն, որպէս զի որջութեանը ատենէն իւր սիրելի որդւոյն երջանկութիւնը, խաղաղութիւնը եւ ամէն կերպ հանգստութիւնը պատրաստէ:

Իսկ ինքը 175 տարեկան լինելէն ետեւ, առողջ ու գեղեցիկ ծերութեամբ կնքեց իւր պանդխտութեան կեանքը եւ փոխեցաւ առ Աստուած: Իսահակ ու Իսմայէլ որդիքն ալ վերուցին պատուով մարմինը ու Սառային քով Թաղեցին:

Աբրահամու նախանձելի հաւատոյն հետեւողներ ամէն ժամանակ եղած են հին եւ նոր եկեղեցւոյ մէջ. բայց նորա արդիւնքը հարկաւ աւելի մեծ եւ պատուական է Աստուծոյ եւ մարդկանց առջեւ, վասն զի ինքը իւր առջեւը չունէր այնպիսի գեղեցիկ օրինակ մը՝ անոր հետեւելու, ինչպէս որ մեք զինքն ունիմք. երանի՛ մեզի թէ որ նորա արդարութեանը, առ Աստուած եւ առ մարդիկ հաւատարմութեանը կատարելապէս հետեւող գտնուիմք, եւ նորա առած օրհնենքները մեք ալ ժառանգեմք:

Աբրահամ նահապետին յիշատակը կարգէ դուրս պատուով ու մեծարանօք հռչակուած է Հրէից, քրիստոնէից, ու տաճկաց, եւ մինչեւ հնդկաց, կրակապաշտից եւ կռապաշտից մէջ, թէպէտ եւ անոր պատմութիւնները միայն Հրէից աստուածաշունչն ու քրիստոնեայքս եմք որ անխառն եւ ազատ պահած եմք առասպելեալ պարագաներէ: Հրէից ըբօւնիները, նմանապէս եւ տաճկները, շատ բաներ կ'պատմեն Աբրահամու վրայ՝ որ սուրբ գրոց պատմութենէն դուրս, ուստի եւ չհաւատալու բաներ են. բայց անով ալ կ'իմացուի թէ ուրեմն խիստ երեւելի անձ մը եղած է Աբրահամ որ վրան այնքան առասպելներ հնարուեր են:

Աստուածաշնչին մէջ պատմուած Աբրահամու պատմութեանը մէջ բան մը չկայ որ անհաւատալի երեւնայ աստուածապաշտ ու բարեմիտ մարդուն: Միայն Իսահակայ զոհին գործողութիւնըն է որ ամենուն վրայ սարսափ ու ապշուծիւն կ'ըզգէ՝ իբրեւ խելքէ դուրս կամ խելքի դէմ ու իբր թէ բնութեան հակառակ բան. այսինքն թէ ի՞նչպէս կ'լինի որ Աստուած այնպիսի սոսկալի մարդազոհ մը պահանջէ, եւ ի՞նչպէս հայր մը այնպիսի հրամանը սիրով եւ անտրտունջ կատարէ: — Բայց այս սարսափն ու ապշուծիւնը ո՛րչափ պիտի պակսի այն ճշմարիտ քրիստոնէին վրայ որ աւետարանին մէջ այս խօսքերը

կկարդայ թէ « Որ սիրէ զհայր կամ զմայր, զօրդի կամ զդուստր, առաւել քան զիս, չէ ինձ արժանի, — Ով որ իւր հայրը կամ մայրը կամ զաւակը քան զիս աւելի կսիրէ, ինձի աշակերտ ըսուելու արժանի չէ:» Ըսել է թէ մարդս իրեն հաւատքին համար ամէն բան պիտի զոհէ. եւ Աբրահամ նահապետն որ հայր ամենայն հաւատացելոց պիտի լինէր, հարկաւ այսպիսի զօրաւոր հաւատքի մը կարգէ դուրս օրինակ պիտի տար ամենուս: Աստուծոյ զանազան հրամաններ ու խոստմունքներ ընդունելու վաղուց վարժած լինելով, չէր կրնար տարակուսիլ թէ արդեօք այն հրամանը տրուոյն ալ Աստուած է թէ չէ:

Աստուած խոստացեր էր Աբրահամու թէ Իսահակ պիտի լինի իւր օրհնեալ սերունդին գլուխ. « Իսահակաւ կոչեսցի բեզ զաւակ. » այժմ Աստուած է դարձեալ հրամայողն որ Իսահակը իրեն զոհուի: Աբրահամ առանց տրտնջելու կկատարէ հրամանը՝ մտածելով թէ Աստուած հարկաւ ինքը գիտէ թէ իւր խոստումը ի՞նչ կերպով պիտի կատարէ: Անկէց աւելի ի՞նչ մեծ զոյ կրնար ընել Աբրահամ:

Քանի որ Իսահակ իրեն քովն էր, ուրիշ ի՞նչ կրնար նուիրել Աստուծոյ որ անոր չափ ընդունելի լինէր: Իւր ազգականն էրը. — արդէն անոնցմէ բաժնուեր հեռացեր էր: Իւր ամուսինը. — այն սովորական սուգի մը միայն պատճառ էր: Հայրենի՞քը. — արդէն նա իւր հայրենիքէն ելած էր: Հարստութի՞ւնքը. — նա հարստութեան վրայ ամենեւին այք չուներ, ինչ պէս որ հինգ թագաւորաց դէմ ըրած յաղթութեան ատենը երեցուց: Պատի՞ւր. — բայց նա լաւ գիտէր թէ ամենայն փառք ու պատիւ միոյն Աստուծոյ կվայելէ: Մեկալ որդի՞քը. — բայց ինքը արդէն անոնցմէ կամաւորապէս բաժնուած էր: Այս ամենայն աղէկութիւններէն թէ որ զրկուէր, նոր Յոբ երանելի մը կլինէր նա, բայց ոչ Աբրահամ նահապետ: Աբրահամու գերազանց հաւատքին մի միայն փորձաքարը (մէհէնկը) Իսահակայ զոհն էր, Իսահակայ՝ որ մի միայն ժառանգ էր իրեն Աստուծոյ ընդունած օրհնենքներուն ու խոստմանցը, ինչպէս նաեւ ամենայն ստացուածոցը:

Աղէկ կըսէ Յակոբոս առաքեալ թէ՛ հաւատքը առանց բարեգործութեան մեռած է: «Հաւատք առանց գործոց մեռեալ են:» թէ՛ որ այնպէս է, ուրեմն Աբրահամու հաւատքին ի՞նչ անտիճանի վառվրուոն ու կենդանի լինելուն սքանչելի ապացոյց եւ հաստատութիւն է ահա այս իրեն դիւցազնական գործը: Ուրեմն շիտակն ըսեմք, չամըչամք. շիտակն ըսեմք, պատրական ժողովականք, որ եթէ Աբրահամու այս գործը մեզի չափէն անելի զարմանք կբերէ, պատճառը այն է որ մեք իրեն հաւատքն ալ մեր հաւատէն կչափեմք. ամենայն հայր ինքզինքը Աբրահամու տեղը կդնէ, ու կնայի որ ամենեւին իրեն բանը չէր անոր ապսպրուած զոյր կատարելը. ուստի՛ եւ կըսէ թէ աղէկ որ այժմս Աստուած այնպիսի հրամաններ չի՛տար: Ամօ՛ժ մեր ժամանակին: Սակայն ասով Աբրահամու տուած օրինակը չմոռցուիր, մանաւանդ թէ անելի ալ պայծառ կփայլի:

Իհարկէ Աստուած այնպիսի հրաման մը չիտար հիմա, եւ Աբրահամու գործը ուրիշ ո՛ր եւ իցէ մարդէ չպահանջեր. բայց Աբրահամու խոստացած ու տուած օրհնութիւններն ու գովասանքներն ալ ուրիշի ոչ տուեր է եւ ոչ կուտայ: Աստուածաշունչ սուրբ գիրքը լեցուն է Աբրահամու գովեստներովը. ամենէն մեծը այս ճանչնամք որ Աստուած քանի՛ տեղ ինքզինքը կանուանէ Աբրահամու Աստուածը. «Ես եմ Աստուած Աբրահամու». եւ Քրիստոս Տէրն մեր շատ անգամ կյիշատակէ Աբրահամու անունը. զոր օրինակ երբոր Զակքէոսին համար կըսէ թէ «Եւ սա որդի Աբրահամու է:» Հրէից ալ երեսին տալով իրենց անհաւատութիւնը՝ կըսէր որ եթէ դուք Աբրահամու հարազատ որդիքը լինէիք, Աբրահամու հաւատքը կուներնայիք, նորա պէս կշարժէիք: Ուրիշ խօսքերուն մէջ ալ՝ մարդուս Աբրահամու սեղանակից լինելը, նորա գոգը հանգչիլը, նորա ուրախակից լինելը՝ իբրեւ մեծ պատիւ ու երջանկութիւն կյիշատակէ Տէրն մեր անտարանին մէջ. թող նաեւ սրբոյն Պօղոսի եւ ուրիշ առաքելոց՝ Աբրահամու տուած գովասանքները: —Մէկ խօսքով, եթէ Աբրահամ մեծ է եւ սքանչելի, իւր հաւատքովն է մեծ, եւ հաւատքը ուրիշ ամէն գործերէն անելի իսահակայ զոհին մէջ կփայլի:

Աբրահամու պատմութիւնը եւ այս մեր դասը վերջացնեմք այս տեղ՝ ուրախութեամբ յիշելով, պատուական ժողովականք, որ մեք ամէնքս ալ այսպիսի հայր ունիմք հաւասոյ. բայց չմոռնամք Գրիստոսի Տեառն մերոյ խօսքն ալ որ ըսաւ Հրէից՝ յանդիմանելով նոցա անհաւատութիւնը. «Մի՛ պարծենաք Աբրահամու որդիք եղածներուդ վրայ՝ երբ անոր հաւատքին ու բարեգործութեանը չէք հետեւիր. գիտցէք որ Աստուած այս քարերէն ալ կընայ Աբրահամու որդիք հանել. — Մի՛ համարիցիք ասել յանձինս՝ եմէ ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ եմէ կարող է Աստուած իբարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու»:



76

0023390

2013

